ARMENIA EITI Extractive Industries Transparency Initiative

ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

ՀՈՒՆՎԱՐ, 2018թ.

ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) ստանդարտի համաձայն (պահանջ 2.5)՝ ԱՃԹՆ-ն իրականացնող երկրներում 2020 թվականից սկսած հանքարդյունահանող ընկերությունները պետք է բացահայտեն իրենց իրական սեփականատերերին (այդ թվում քաղաքական ազդեցություն ունեցող անձանց): Համաձայն ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի որոշման՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է հրապարակի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը մինչև 2018թ. հունվարի 1-ը:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից իրականացվող ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետությանը ցուցաբերվել է տեխնիկական աջակցություն՝ մասնավորապես, իրական սեփականատերերի բացահայտման օրենսդրական ուսումնասիրության իրականացման և իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի մշակման հարցերում:

ՀՀ ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի, ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարության, լիազոր պետական մարմինների պատասխանատուների և այլ շահագրգիռ անձանց հետ համագործակցելով՝ ներգրավված միջազգային և տեղական խորհրդատուները ներկայացրեցին Հայաստանում իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրավական վերլուծություն (որը ներառում է իրական սեփականատիրոջ սահմանման առաջարկություն) և կազմեցին Հայաստանի Հանրապետության իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզը:

Հայաստանի Հանրապետությունում իրական սեփականատերերի բացահայտումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք օրենսդրական փոփոխություններ: Համապատասխան օրենսդրության մշակման պատասխանատու մարմինն է ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ համատեղ:

Իրական սեփականատիրոջ հասկացության առաջարկվող օրենսդրական սահմանումը

Իրական սեփականատեր է հանդիսանում այն ֆիզիկական անձը, ով ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում կամ վերահսկում է իրավաբանական անձին:

Քաղաքական ազդեցություն ունեցող անձը համարվում է իրական սեփականատեր՝ անկախ հսկողության մակարդակից և մասնակցության կամ բաժնետիրացման չափից:

Տիրապետում կամ հսկողություն նշանակում է, որ ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով.

ա) առանձին կամ ընտանիքի անդամների և/կամ փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկում կամ տիրապետում է իրավաբանական անձի առնվազն 10 տոկոս մասնակցության կամ քվեարկության իրավունքին.

բ) վերահսկում է իրավաբանական անձին՝ նախապատվության իրավունք տվող բաժնետոմսերի, արտոնյալ բաժնետոմսերի և/կամ երկակի կամ բազմակի քվեարկության իրավունք տվող բաժնետոմսերի միջոցով.

գ) էական տնտեսական օգուտ է ստանում իրաբանական անձից, որը կազմում է իրավաբանական անձի տարեկան շահույթի առնվազն 15 տոկոսը.

դ) իրավասու է նշանակել կամ ազատել իրավաբանական անձի տնօրենների մեծամասնությանը.

ե) իրավունք ունի ազդել կառավարման վրա կամ վերահսկել կառավարումը կամ ընկերության գործունեությունը կամ իրավասու է կանխորոշել որոշումներն այլ միջոցներով, ներառյալ և առանց սահմանափակման գործարքների, հավատարմագրային կառավարման պայմանագրի, համատեղ գործունեության պայմանագրի միջոցով:

Սույն սահմանման իմաստով «քաղաքական ազդցություն ունեցող անձինք» են համարվում այն ֆիզիկական անձինք, ում ներկայում կամ անցյալում վստահվել են առանցքային հանրային գործառույթներ, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամները և փոխկապակցված անձինք: Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց շրջանակը սահմանվում է՝ համաձայն «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի:

Սույն սահմանման իմաստով միևնույն ընտանիքի անդամ են համարվում անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները:

Սույն սահմանման իմաստով իրավաբանական անձինք համարվում են փոխկապակցված, եթե

ա) տվյալ իրավաբանական անձը քվեարկելու իրավունքով տիրապետում է մյուսի՝ ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի, այսուհետ՝ բաժնետոմս) 10 և ավելի տոկոսին, կամ իր մասնակցության ուժով կամ տվյալ անձանց միջև կնքված պայմանագրին համապատասխան հնարավորություն ունի կանխորոշել մյուսի որոշումները.

բ) նրանցից մեկի որևէ կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամների թվի մեկ երրորդը միաժամանակ հանդիսանում է մյուս անձի որևէ կառավարման մարմնի անդամ կամ նման պարտականություններ կատարող այլ անձ.

գ) նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից:

Սույն սահմանման իմաստով ֆիզիկական և իրավաբանական անձինք համարվում են կապակցված, եթե նրանք գործել են համաձայնեցված՝ ելնելով ընդհանուր տնտեսական շահերից, կամ եթե տվյալ ֆիզիկական անձը կամ նրա ընտանիքի անդամը հանդիսանում է.

ա) տվյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի 10 տոկոսից ավելին տնօրինող մասնակից.

բ) օրենքով չարգելված այլ ձևով իրավաբանական անձի որոշումները կանխորոշելու հնարավորություն ունեցող անձ.

գ) տվյալ իրավաբանական անձի խորհրդի նախագահ, խորհրդի նախագահի տեղակալ, խորհրդի անդամ, գործադիր տնօրեն, նրա տեղակալ, վարչության նախագահ, վարչության անդամ, գլխավոր հաշվապահ, նրա

տեղակալ, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար, անդամ կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ, վերստուգիչ հանձնաժողովի անդամ կամ նման այլ մարմինների անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԱՔԱՐ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՈԴՎԱԾ	ՆՊԱՏԱԿ	ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ	ՎԵՐՋՆԱ-ԺԱՄԿԵՏ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
1. Իրական սեփականատերերի թափանցիկությունն ապահովող իրավական և ինստիտուցիոնալ դաշտ	Սահմանել իրավական այն բարեփոխումները, որոնք անհրաժեշտ են՝ հանքարդյունաբերության ոլորտում ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջներին և միջազգային չափանիշներին համապատասխան իրական սեփականատերների պատշաճ բացահայտումն ապահովելու համար:	1.1. Իրավական դաշտի ուսումնասիրություն, որում ներկայացվում են ՀՀ մետաղական հանքաքար արդյունահանող կազմակերպությունների իրական սեփականատերերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումների առաջարկություններ և համապատասխան օրենսդրական փոփոխությունների տեքստերը:	Խորհրդատու, բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	29/12/2017	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
		1.2. Ելնելով իրական սեփականատերերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումներից և առաջարկված ճանապարհային քարտեզից՝ այլ իրավական ակտերում ենթակա փոփոխությունների ցանկի կազմում:	Խորհրդատու	29/12/2017	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
		1.3. Իրական սեփականատերերի աշխատանքային խմբում նոր անդամների ներառում և աշխատանքային խմբի անդամի ընտրություն, ով կմշակի ԲՇԽ-ի եռամսյակային հաշվետվությունների՝ իրական սեփականատերերի բացահայտման աշխատանքների վերաբերյալ հատվածը:	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	30/01/2018	ՀՀ կառավարություն

		1.4. Իրական սեփականատերերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց սահմանումների, բացահայտման հայտարարագրերն ընդունող պետական մարմնի լիազորությունների, մյուս մարմինների հետ համագործակցության պարտականությունների, բացահայտման պահանջի խախտման դեպքում սանկցիաների և այլ հարցերի վերաբերյալ քննարկումների անցկացում համապատասխան պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ, մասնավորապես՝ ՀՀ ազգային ժողով, ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ արդարադատության նախարարություն (այդ թվում, Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն), հանքարդյունահանող ընկերություններ (Հայաստանի հանքարդյունաբերողների և մետալուրգների միության միջոցով), քաղաքացիական հասարակության կազմակերպություններ:	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	28/02/2018	ՀՀ կառավարություն, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն
		1.5. Հայաստանի իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի ներկայացում ՀՀ կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստին:	ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	09/03/2018	ՀՀ կառավարություն
		1.6. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի փոփոխությունների նախագծի կազմում, որով պարտադիր պահանջ է սահմանվում մետաղական հանքարդյունահանող ընկերությունների կողմից իրական սեփականատերերի բացահայտումը, փոփոխության դեպքում այդ տվյալների թարմացումը և չբացահայտման դեպքում՝ պատժամիջոցները:	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքներ ի և բնական պաշարների նախարարություն, բազմաշահառու	27/03/2018	ՀՀ կառավարություն

			խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)		
		1.7. Այլ օրենքներում (մասնավորապես՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենք, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք և այլն) փոփոխությունների նախագծերի փաթեթի կազմում՝ ապահովելու համար նախատեսվող բարեփոխումների իրականացումը, բիզնես գործընթացը, ինչպես նաև պատասխանատվության բաշխումը:	ՀՀ արդարադատության նախարարություն, բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	27/03/2018	ՀՀ կառավարություն
		1.8. ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում և այլ օրենքներում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Ազգային ժողով և ընդունման համար անհրաժեշտ ժամկետ՝ հատուկ ուշադրություն դարձնելով այն հարցին, որ, անկախ կազմակերպաիրավական ձևից, բոլոր մետաղական հանքարդյունահանող ընկերություններից ապահովվի իրական սեփականատերերի մասին միևնույն տվյալների հավաքագրում, որը կբխի ԱՃԹՆ ստանդարտի պահանջներից և միջազգային ստանդարտներին համապատասխան իրական սեփականատիրոջ սահմանումից:	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	29/05/2018 - 28/10/2018	ՀՀ կառավարություն
		1.9. «Իրավաբանական անձանց պետական գրանցման» մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Ազգային ժողով և ընդունման համար անհրաժեշտ ժամկետ	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների	29/05/2018 - 28/10/2018	ՀՀ կառավարություն

			նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)		
		1.10. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի ներկայացում Ազգային ժողով և ընդունման համար անհրաժեշտ ժամկետ:	ՀՀ արդարադատության նախարարություն և ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ քարտուղարություն)	29/05/2018 - 28/10/2018	ՀՀ կառավարություն
		1.11. Հետագա տարիներին իրական սեփականատերերի բացահայտման շրջանակի ընդլայնման նպատակահարմարության վերաբերյալ ուսումնասիրություն և դրա հետ կապված միջոցառումների ժամանակացույցի կազմում:	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	01/10/2018-30/12/2018	ՀՀ կառավարություն
		1.12. Օրենսդրական փոփոխությունների չընդունման դեպքում՝ ա) ճանապարհային քարտեզի վերանայում, տեղեկատվական արշավի անցկացում՝ կարևորելով իրական սեփականատերերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց բացահայտման պահանջները օրենսդրության մեջ ներառելը բ) օրեսնդրական նախաձեռնություն. Խորհրդակցություններ խորհրդարանական համապատասխան հանձնաժողովի	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, բազմաշահառու խումբ,	20/12/2018	

		(հանձնաժողովների) և պետական մարմինների հետ, օրենքների նախագծերի նոր փաթեթի մշակում:	ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)		
2. Տվյալների հավաքագրում և հավաստիության ստուգում	Ապահովել իրական սեփականատերերի բացահայտմանը վերաբերող տվյալների պատշաճ հավաքագրումը և հավաստիության ստուգումը՝ պետական մարմինների համապատասխան համակարգերի միջոցով	2.1. Իրական սեփականատերերի բացահայտման և հավաստիության ստուգման շրջանակներում պարտադիր տվյալների հավաքման ու մշակման տարբերակների քննարկում ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ընդերքի գործակալության և ՀՀ կենտրոնական բանկի (ֆինանսական դիտարկումների կենտրոնի) հետ՝ հետագայում դրանք իրավական ակտերում ամրագրելու նպատակով:	Բազմաշահառու խումբ, ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	22/11/2018	ՀՀ կառավարություն
		2.2. Իրական սեփականատերերի բացահայտման և ներկայացված տվյալների հավաստիության ստուգման ենթաօրենսդրական իրավական ակտերի մշակում, որոնցում այդ թվում՝ պետք է սահմանվեն իրական սեփականատերերի և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասին տվյալների բացահայտման հայտարարագրի ձևը, տվյալների ներկայացման կարգը, ժամկետները, հավաստիության ապահովման մեխանիզմը, ինչպես նաև ներկայացված տվյալներից հրապարակման ենթակա տվյալների ցանկը և հայտարարագրում ներկայացված տվյալները հիմնավորող փաստաթղթերի ցանկը:	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	29/02/2019	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ

		2.3.2.2 կետում թվարկված հարցերը կարգավորող, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտման և ներկայացված տվյալների ստուգմանը վերաբերող այլ հարցերի առնչությամբ ենթաօրենսդրական իրավական ակտերի ընդունում:	ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն, ՀՀ ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	31/05/2019	ՀՀ կառավարություն
3. Իրական սեփականատերերի հանրային ռեգիստր	Հրապարակել իրական սեփականատերերի ռեգիստրը	3.1. Խորհրդակցություններ տարբեր պետական մարմինների հետ (ՀՀ կենտրոնական բանկ, ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ)՝ իրական սեփականատերերի ռեգիստրի SS պլատֆորմի (դատաբազայի) տեխնիկական առաջադրանքի մշակման շրջանակներում:	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	15/06/2019	ՀՀ կառավարություն
		3.2. Իրական սեփականատերերի ռեգիստրի SS պլատֆորմի (դատաբազայի) տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում՝ հաշվի առնելով տարբեր պետական մարմինների տեղեկատվական համակարգերի փոխգործելիության և ռեգիստրում բաց տվյալների ձևաչափով տեղեկատվությունը տեղակայելու և տեղեկության որոնման հնարավորության (առնվազն երկլեզու՝ հայատառ և լատինատառ) անհրաժեշտությունը:	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	01/07/2019	ՀՀ կառավարություն

		3.3. Իրական սեփականատերերի ռեգիստրի SS պլատֆորմի (դատաբազայի) ծրագրային ապահովման նպատակով մրցույթի անցկացում՝ համապատասխան ընկերություն ընտրելու նպատակով և ընկերության հետ պայմանագրի կնքում:	ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	10/09/2019	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ
		3.4. Իրական սեփականատերերի ռեգիստրի SS պլատֆորմի (դատաբազայի) ծրագրի հանձնում:	Ընտրված ընկերություն	10/11/2019	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ
		3.5. Իրական սեփականատերերի ռեգիստրի ծրագրի փորձարկում և համակարգում, հաշվետու ընկերությունների գրանցման անհրաժեշտության դեպքում գրանցման իրականացում:	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն), հանքարդյունաբերող ընկերություններ, Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստր, ընտրված կազմակերպություն	13/12/2019	Համաշխարհային բանկ
		3.6. Իրական սեփականատերերի առցանց ռեգիստրի հանրային գործարկում:	Իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստր, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն), ընտրված կազմակերպություն	27/12/2019	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ

4. Կարողությունների զարգացում և իրազեկվածության բարձրացում	Մինչև 2020թ. հունվարի 1-ը ապահովել իրական սեփականատերերի արդյունավետ բացահայտման համար անհրաժեշտ՝ հանրության իրազեկվածության և համապատասխան կարողությունների պատշաճ մակարդակ	4.1. Շահառուների ներգրավմամբ իրազեկման արշավ՝ իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ:	ՔՀԿ-ներ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	01/06/2018 -31/12/2018	ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն
		4.2. Հայաստանի ԱՃԹՆ-ի պորտալում հատուկ բաժնի մշակում՝ նվիրված իրական սեփականատերերի բացահայտմանը, որը ներառում է Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի մասին ընդհանրական բնույթի հարց-պատասխաններ:	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	30/03/2018	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ
		4.3. Հանրային իրազեկման միջոցառումներ օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	12/10/2018	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ
		4.4. Իրական սեփականատերերի բացահայտման ճանապարհային քարտեզի իրագործման վերաբերյալ հաշվետվություն:	Իրական սեփականատերերի աշխատանքային խումբ	21/12/2018	ՀՀ կառավարություն
		4.5. Իրական սեփականատերերի բացահայտման թեմայով վերապատրաստումներ կառավարության աշխատակիցների համար	ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	17/05/2019	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ
		4.6. Ենթաօրենսդրական ակտերի կիրարկման վերաբերյալ վերապատրաստումներ ԲՇԽ և ընկերությունների համար	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	14/06/2019	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ

		4.7. Իրական սեփականատերերի ռեգիստրի SS պլատֆորմում (դատաբազայում) տվյալների վերբեռնման վերաբերյալ վերապատրաստումներ ընկերությունների համար:	Հայաստանի հանքարդյունաբերողների և մետալուրգների միություն, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	13/12/2019	ՀՀ կառավարություն, Համաշխարհային բանկ
		4.8. ԶԼՄ-ների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների համար իրական սեփականատերերի բացահայտման վերաբերյալ իրազեկման միջոցառումներ	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	13/09/2019	ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն
		4.9. ԶԼՄ-ների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների համար իրական սեփականատերերի հանրային առցանց ռեգիստրից օգտվելու վերաբերյալ վերապատրաստումներ	Բազմաշահառու խումբ, ՀՀ կառավարության աշխատակազմ (ԱՃԹՆ-ի քարտուղարություն)	27/12/2019	ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալություն